



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2019թ. թիվ 609-Ա

ԼՈՒՈՒՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԼԽԱՎՈՐ
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 40-Ա ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի առողջապահության ոլորտում տեղի ունեցած կադրային փոփոխությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել՝

1/ Մարզի առողջապահական ոլորտի գլխավոր մասնագետների ցուցակը՝ համաձայն հավելված 1-ի:

2/ Մարզի առողջապահական ոլորտի գլխավոր մասնագետների գործունեության կանոնակարգը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. փետրվարի 10-ի թիվ 40-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

 Invalid signature


ԱՐՄԻՆԱՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

Ց ՈՒ Ց Ա Կ

Լոռու մարզի առողջապահական համակարգի
գլխավոր մասնագետների

Գոգորյան Հովակիմ	- գլխավոր վիրաբույժ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վիրաբուժական բաժանմունքի վարիչ
Լամբարյան Թամարա	- գլխավոր թերապևտ, «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի սոմատիկ բաժանմունքի վարիչ
Ավալյան Արամ	- գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի վարիչ
Անտոնյան Իշխան	- գլխավոր մանկաբույժ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկական անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ
Եդոյան Արտակ	- գլխավոր ուռուլոգ, «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն
Գասպարյան Գայանե	- գլխավոր նյարդաբան, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի թերապևտիկ բաժանմունքի վարիչ
Վերանյան Վլադիմիր	- գլխավոր սրտաբան, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի թերապևտիկ բաժանմունքի ավագ սրտաբան
Քալաշյան Նարինե	- գլխավոր ուռուցքաբան, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ուռուցքաբանական բաժանմունքի վարիչ
Կարաքեշիշյան Լիլիթ	- գլխավոր նեոնատոլոգ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի ավագ նեոնատոլոգ
Հակոբյան Էդուարդ	- գլխավոր վնասվածքաբան, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վիրաբուժական բաժանմունքի ավագ վնասվածքաբան
Մադոյան Մարտիրոս	- գլխավոր անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վերակենդանացման, անզգայացման և ինտենսիվ բուժման բաժնի ղեկավար
Ղամբարյան Գագիկ	- գլխավոր մանկական վիրաբույժ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկական վիրաբույժ
Ղազարյան Ռիմա	- գլխավոր ներզատաբան, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի թերապևտիկ բաժանմունքի ներզատաբան
Մկրտչյան Վահագն	- գլխավոր ախտաբանաանատոմ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Քալանթարյան Գայանե	- գլխավոր հոգեբույժ, «Լոռու մարզային հոգեյնյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի հոգեբույժ
Չիլինգարյան Ռոբերտ	- գլխավոր ինֆեկցիոնիստ, «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի բժիշկ ինֆեկցիոնիստ

- Լորիս Ռուսո Մարինե - գլխավոր ֆթիզիատր, «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի հակատուբերկուլյուզային բաժանմունքի վարիչ
- Օհանյան Այծեմիկ - գլխավոր գերծայնային ախտորոշման բժիշկ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գերծայնային ախտորոշման բժիշկ
- Աթոյան Արամ - գլխավոր ռենտգենաբան, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ճառագայթային ախտորոշման բժիշկ
- Նիկողոսյան Վահրամ - գլխավոր ստոմատոլոգ, «Դենս» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն
- Սարգսյան Նաիրա - գլխավոր ակնաբույժ, «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ակնաբույժ
- Շիրվանյան Իվան - գլխավոր քիթ-կոկորդ-ականջաբան, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի քիթ-կոկորդ-ականջաբան

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

10/21/2019

X



ՎԱՆԵՐԻ ԽԱՂԱՏՐՅԱՆ

Վ. ԽԱՂԱՏՐՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Մարզային գլխավոր մասնագետի պաշտոնում նշանակվում է որակավորված մասնագետը, որն իր բնագավառում ունի բուժական և կազմակերպչական աշխատանքի հարուստ փորձ:
2. Մարզային գլխավոր մասնագետը նշանակվում և ազատվում է մարզպետի որոշումով, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի առաջարկությամբ:
3. Մարզային առողջապահական ընկերությունում աշխատող մարզային գլխավոր մասնագետը հիմնական հաստիքային աշխատանքից ազատվում է ընկերության տնօրենի կողմից՝ համաձայնեցված առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի հետ:
4. Մարզային գլխավոր մասնագետն իր գործունեությամբ հաշվետու է մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը:
5. Մարզային գլխավոր մասնագետը պարտավոր է՝
 - 5.1 Առողջապահական ընկերությունների գործունեության ուսումնասիրության և առկա իրավիճակի վերլուծության հիման վրա մշակել միջոցառումներ՝ աշխատանքները բարելավելու նպատակով:
 - 5.2 Իրականացնել այցելություններ մարզի առողջապահական ընկերություններ՝ մեթոդական և գործնական օգնություն ցուցաբերելու համար:
 - 5.3 Ապահովել ծանր հիվանդների և բարդ դեպքերի կոնսուլտացիաները և օգնել բուժման գործընթացին /բարդ և ծանր դեպքերի մասին պարտավոր են տեղյակ պահել առողջապահական ընկերությունների տնօրենները/:
 - 5.4 Յուրաքանչյուր կիսամյակ մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն ներկայացնել հաշվետվություն՝ իրենց գործունեության մասին:
6. Գլխավոր մասնագետը, ելնելով դեպքի առանձնահատկությունից, պարտավոր է մասնակցել կլինիկական, կլինիկաանատոմիական վերլուծությունների հանձնաժողովի աշխատանքներին:
7. Գլխավոր մասնագետը պատասխանատու է համապատասխան հրամանների, հրահանգների և հանձնարարականների կատարման համար:
8. Մարզային առողջապահական ընկերությունում աշխատող գլխավոր մասնագետներն ստանում են լրավճար, նրանց վճարման աղբյուր են այն առողջապահական ընկերությունները, որտեղ նրանք ունեն հաստիքային

աշխատանք և նրանց վճարվող աշխատավարձի չափը սահմանվում է մարզպետի կողմից՝ 25.000 դրամ:

9. Աշխատավարձի վճարման մասին հրամանը տրվում է տվյալ առողջապահական կազմակերպության տնօրենի կողմից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

 Invalid signature

X 

ՎԱԼԵՐԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱԶԱՏՐՅԱՆ